NASDAQ OMX

N ՀՕԱՏ-3-198 «28» 11 2016թ.

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի

Վարչության նախագահ՝ պարոն Վ. Աթայանին

Հասցե՝ 0025, ՀՀ, ք. Երևան, Չարենցի փ., 12 շենք, թիվ 1-5

Հարգելի պարոն Աթայան,

Կից Ձեզ ենք ներկայացնում «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի Գլխավոր տնօրենի 2016 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՏԲ-003-11/16 որոշումը՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի սովորական անվանական բաժնետոմսերի նոր թողարկումը (UNI1) «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի տեղաբաշխման հարթակում տեղաբաշխման թույլատրման մասին:

Առդիր՝ 1 (մեկ) թերթ:

Հարգանքով,

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՍԱՐՈՅԱՆ**

Կատարող՝ Ներսես Հակոբյան
Հեռ. 54-33-24-120

NASDAQ OMX

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

28 նոյեմբերի 2016 թվականի N ՏԲ-003-11/16

ք. Երևան

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից թողարկած սովորական անվանական բաժնետոմսերի նոր թողարկումը տեղաբաշխման թույլատրելու մասին

Հիմք ընդունելով «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2016 թվականի նոյեմբերի 25-ի դիմումը Ընկերության 100 (մեկ հարյուր) դրամ անվանական արժեքով, 17,391,305 (տասնյոթ միլիոն երեք հարյուր իննսունմեկ հազար երեք հարյուր հինգ) հատ սովորական անվանական բաժնետոմսերի նոր թողարկումը տեղաբաշխման թույլատրելու վերաբերյալ, ինչպես նաև «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Օպերատոր) «Բորսայական ծառայությունների դեպարտամենտի» կողմից 2016 թվականի նոյեմբերի 28-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների» 17-րդ գլխի 98) կետով և Բորսայի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի 100 (մեկ հարյուր) դրամ անվանական արժեքով, 17,391,305 (տասնյոթ միլիոն երեք հարյուր իննսունմեկ հազար երեք հարյուր հինգ) հատ սովորական անվանական բաժնետոմսերի նոր թողարկումը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից շնորհվել է 00UNIBS10ER2 ծածկագիրը, թույլատրել տեղաբաշխման Օպերատորի տեղաբաշխման հարթակում՝ շնորհելով UNI1 հապավումը:
2. Տեղաբաշխումը կազմակերպել սովորական բաց ստանդարտ աճուրդի ձևով՝ 2016 թվականի նոյեմբերի 29-ից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ, ժամը 11:00-ից մինչև 15:00-ը:
3. Ներդրողների համար սահմանել մինիմալ գնման ծավալ՝ 1,000,000.00 ՀՀ դրամ:
4. Հանձնարարել «Բորսայական ծառայությունների դեպարտամենտ»-ին՝ սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը և որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի միջոցով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի նոյեմբերի 29-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՍԱՐՈՅԱՆ**